ԱՄՍԱԳԻՐ

ԳՐԱԿԱՆ· — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ· — ՊԱՏՄԱԿԱՆ

ԿՐԹԱԿԱՆ ԵՒ ԳԻՏԱԿԱՆ

1843–1898 ՀԱՏՈՐ ԾԶ ՄԱՐՏ

ԳՐԱԴԱՏԱԿԱՆ

Հ. Հիւբշման. — Armenische Grammatik. — Հատոր Ա. Հայկական ստուգաբանութիւնք. — Մասն Բ. Ասորական և յունական փոխառեալ բառեր և բնիկ բառեր հին հայերենի մէջ. — Լայպցիգ. 1897։

ԳՐՔԻՆ առաջին մասը՝ ուր պր. Հիւբշման կ'ուսումնասիրէր իրանեան փոխառութիւնները, արդէն ազդարարուած էր այս տեղ (*Revue Critique*, 1 յունիս 96). այս երկրորդ մասը կը պարունակէ ասորական և յունական փոխառութիւններն ու հնդեւրոպական բառերը։ Այսու լրացած կ'ըլլայ հայերէն ստուգաբանական բառարան մը՝ որ տիպար է բանասիրական ճշդութեան և լեզուաբանական ուղղութեան. ուրիշներու կողմէ առաջարկեալ ստուգաբանութիւնները դատուած են հոն ուղիղ դատաստանաւ. որովհետեւ՝ հեղինակն չանացած է աւելի ճշմարիտ համեմատութիւններ տալու, աւելի՝ քան թէ ուրիշ նոր համեմատութիւններ։ Բոլորովին զգալի է՝ թէ գիտունն՝ երկար տարիներու ուսումնասիրութեամբ նիւթին տէր դառնալէ վերջ միայն՝ առանց ամապարանաց գրած և ամենակատարեալ ճշդութեամբ տպագրել տուած է սոյն երկը, որ իր նախորդներուն պատմական արժէք մը միայն կը թողու և կը դառնայ հին նորագոյն աշխատութեանց։

Ասորերէնէ և յունարէնէ փոխառութիւններն՝ արդիւնք են կրօնական ազդեցութեան,